Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՍԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Արսինե Աղաջանյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչության կրթական ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, քաղաք Օլդենբուրգ, սեպտեմբերի 23-ից 28-ը, 2024թ.

4. Հրավիրող կողմը.

Օլդենբուրգի Կարլ Վոն Օսեցկու անվան համալսարան

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Հայաստանում ներառական, թվային ու կանաչ ուղղվածությամբ բարձրագույն կրթության պատշաճ կառավարման և որակի գործունեության առանցքային ցուցանիշների ազգային շրջանակի ստեղծում» (Establishment of national framework of key performance indicators for good governance and quality towards inclusive, digital and green oriented higher education in Armenia (KPI4HE) դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքային հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները.

- Աշխատանքային փաթեթների ուսումնասիրություն, նախատեսված աշխատանքների ժամկետների հստակեցում,
- Աշխատանքային 1-ին փաթեթի ամփոփում,
- Ծրագրի գործընկերներ Օլդենբուրգի և Ջենովայի համալսարանների՝ KPI-ների ներդրման փորձի ուսումնասիրություն,

- Նախատեսված աշխատանքների կատարման նպատակով անհատական հանդիպումներ ծրագիրը համակարգողների հետ,
- Ընթացիկ այլ հարցեր:

7. <u>Հանդիպումները, ելույթները, այցելություններ.</u>

Աշխատաժողովի նպատակն էր ուսումնասիրել բարձրագույն կրթության համակարգում KPI-ների մշակման ու ներդրման եվրոպական փորձը:

Քննարկվեց Օլդենբուրգի Կարլ Վոն Օսեցկու անվան համալսարանի մոտեցումը բարձրագույն ուսումնական հաստատությունների KPI-ներում կայուն, կանաչ զարգացման բաղադրիչների, որակի ապահովման, միջազգայնացմանը, ինչպես նաև բարձրագույն կրթության համակարգում կանաչ և թվային կրթության ցուցիչների կիրառման ուղղությամբ: Առանձնացվեցին այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են կայունությունը որպես ռազմավարական դրույթ, կայունությանն ուղղված կրթական ծրագրերի կամ առանձին մոդուլների առկայությունը, կայունությունն ուսուցման, կառավարման և այլ համակարգերում:

Ներկայացվեց Օլդենբուրգի համալսարանի Շրջակա միջավայրի և կայունության հետազոտության կենտրոնը՝ TRUST անվամբ («Կայունությունը վստահություն է» կարգախոսով), որը գործ ունի միջազգայնացման, նորարարությունների, միջառարկայական կողմնորոշման և այլն հարցերի հետ:

Ջենովայի համալսարանի գործընկերները ներկայացրեցին Համալսարանում պետական ֆինանսավորման սկզբունքները՝ անդրադառնալով բուհի կարիքների հոգման համար պետության հատկացրած ֆինանսական միջոցների ստացման հիմնական դրույթներին (որակի ապահովում, համատարմագրման առկայություն, որակյալ կրթություն և այլն):

Անդրադարձ կատարվեց նաև Օլդենբուրգի համալսարանի ստարտափների համար մշակված KPI-ներին, Ռիգայի տեխնիկական համալսարանի միջազգայնացման փորձին, կրթության որակի ապահովմանն ուղղված ռազմավարական պլանավորմանը և այլն հարցերին:

Կատարված աշխատանքների քննարկման նպատակով անհատական հանդիպումներ անցկացվեցին գործընկերների հետ, որի ընթացքում քննարկվեցին նախատեսված աշխատանքների բովանդակային կողմը՝ հստակեցնելով առաջիկա վերջնաժամկետները, ծրագրի շրջանակներում նախատեսվող այցերի հնարավոր ժամկետները:

8. *Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը*

Աշխատանքային այցի ընթացքում քննարկվեցին բարձրագույն կրթության համակարգում KPI-ների մշակման և ներդրման հիմնական հարցերը: Որոշվեց հանդիպում կազմակերպել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի, Երևանի պետական համալսարանի և Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի ներկայացուցիչների հետ՝ հստակեցնելու ՀՀ-ում բարձրագույն կրթության համակարգում KPI-ների մշակման հիմնական ուղղությունները՝ նախատեսված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Հոկտեմբերին և նոյեմբերին ԵՊՀ-ում հանդիպումներ են անցկացվելու ծրագրի մասնակիցների հետ՝ KPI-ների մշակման աշխատանքներն իրականացնելու նպատակով:

9. *Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.*

Հստակեցվեցին հաջորդ աշխատաժողովի մասնակիցները, ժամկետները, վայրը: Աշխատաժողովը նախատեսվում է անցկացնել Իտալիայի Հանրապետության Ջենովա քաղաքում, 2025 թվականի մարտին:

10. *Ստորագրությունը, ամսաթիվը*

Արսինե Աղաջանյան
30.09.2024թ.